Ինչպէս անօթն անոյշ խնկոց
Գահէ գՀին բոյր՝ մինչև փչրի...

Թ. ԹԷՐԶԵԱՆ

ԳԱՐՈՒՆ

ՎԵՐԱԴԱՐՁ

Քոյր իմ, ահա գարդարուն
Նորոգ եկաւ մեզ գարուն,
Սրտիդ՝ հոգւոյդ պէս կուսան
Ահա ծաղկունք այլ բուսան.
Հասաւ առ մեզ զով զեփիւռ
Խնկոց բուրմամբ քաղցրաստիւռ.
Հասիր և դուն վարդերես,
Ո՞ւր ես, ո՛հ քոյր իմ, ո՞ւր ես։

Դու խոստացար մեզ գարնան
Դառնալ երբ հաւք կը դառնան.
Դարձան թռչնիկք ի բունիկ,
Մենք քեզմէ լուր մի չունինք.
Ըղքեզ մնտիկ և հեռու
Հարցինք ամէն հովերու,
Ամէն զեփիւռք և հոսանք
Ըսին. « Ձեր քոյր չը տեսանք »։

Դարձեալ ըղքեզ անձկագին՝
Հարցինք նորեկ սոխակին,
Եւ խնդից երգն ի բերան
Առ մեզ հասնող ծիծեռան,
Բայց, « Ձը տեսանք ձեր Պայծառ »,
Ե՛ըսեն սոխակն ու ծիծառ,
« Ցով անցանք, դաշտ ու բըլուր,
Իրմէ բընաւ չունինք լուր »։

Հարցինք ծաղկանցն այն չքքեղ,
« Ո՞ւր է ձեր քոյրն ալագեղ »,
Այլ վա՛հ, գոհարք դըրախտին

digitised by A.R.A.R.@

Հայեցան մունջ ի գետին.
«Դուք գանէ, դուք, ահ ինչու
Ձեր խօսիր ամպք օդաչու,
Ձեր ծոցին մէջ անդորրիկ
Ձինքն ալ ինչու չը բերիք...»

Այսպէս ուրեմն, ով կուսիկ,
Երազ մ'էր այն խաբուսիկ,
Այսպէս, աշնան այն առաւուն
Ցանդարձ յուղի անկար դուն,
Ալ չես կոխեր զայն երկիր,
Ուր մենք դեռ կանք վչտակիր.
Ձերծ ի բաղդին հարուածոց
Հողոյն ննջես արդ ի ծոց...

Հանգի՛ր, ահ, քոյր իմ, հանգի՛ր,
Ոչ մեզ նրման տարագիր.
Կանուխ մեռար, և սակայն
Կեանքն ինչ է սուղ կամ երկայն.
Ո՛ւր թէ և մենք գայինք շոյտ
Ի հանգրուանդ այդ անքոյթ.
Հանգի՛ր, երնեակ քեզ հազար,
Լուսոյն քան զմեզ շուտ հասար։

ԿԱՐԱՊԵՏ Ա. ՈՍԿԵԱՆ

ԼՈՆՏՐԱՅԻ ՈՍՏԻԿԱՆՈՒԹԻՒՆՆ

Պ. Ճէյմս Մուրրու նախկին հրամանատար Լոնտրայի ոստիկանութեան՝ մօտերս շատ հետաքրքրական յօդուած մը հրատարակեց յիշեալ քաղաքին ոստիկանութեան վրայ։ Լոնտրայի ոստիկանութեան խուզարկութեան կամ հսկողութեան սովորական շրջանակն է 700 քառակուսի մղոն։ Ամբողջ այս ոստիկանութեան միահամուռ ուժն է 15,000 անձ. այս թիւէն կրնանք ի բաց առնուլ 2000 հոգի՝ որք հատարակաց շինուածոց վրայ հսկելու պաշտօնն ունին. իսկ բուն ոստիկանութեան յատուկ գործոց պարապելու համար կը մնան ուրեմն գրեթէ 13,000 հոգի. սակայն այս ուժն ալ ոչինչ կրնանք համարել՝ ի նկատի առնելով այն անհամար բազմութիւնը (գրեթէ 5,000,000) որ կը բնակի այս ոստիկանութեան շրջանակին մէջ և այն ահագին և անչափ դրամոց գումարը և հարստութեանց կոյտը՝ զորս պէտք են պաշտպանել

digitised by A.R.A.R.@